



The Armenian Center  
for National and International Studies

Ռազմավարական և ազգային հետազոտությունների  
հայկական կենտրոն

Армянский центр стратегических и  
национальных исследований

ՍԱՐԳԻՍ ՍԵԴՐԱԿՅԱՆ  
*«Ֆերմերային Շարժում» ՉԿ-ի նախագահ*

ԳՅՈՒՂԱԿԱՆ ԱՂՔԱՏՈՒԹՅՈՒՆ ԵՒ  
ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

**SARGIS SEDRAKYAN**  
*President, "Movement of Farmers"*

**RURAL POVERTY AND DEMOCRACY**

հունիս 2009թ.  
Երեւան

Ներկայացված տեսակետները միմիայն անհատ հոդվածագիրներինն են, և կարող են չհամընկնել կենտրոնի դիրքորոշումների հետ:

© 2009, Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոն:  
Հոդվածի կամ նրա առանձին հատվածների հրատարակումը առանց ՌԱՀԿ-ի գրավոր թույլտվության արգելվում է:

© 2009, Армянский центр стратегических и национальных исследований.  
Публикация статьи или отдельных ее частей без письменного разрешения АЦНИ запрещена.

© 2009, Armenian Center for National and International Studies.  
This publication may not be reproduced or published, in whole or in part, without the express written consent of the Center.



**ՖՇ**

**Հայաստանի**

**«ՖԵՐՄԵՐԱՅԻՆ ՇԱՐԺՈՒՄ»**

**հասարակական կազմակերպություն**

## **ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԱՏԵՂԾՈՒՄԸ**

«Հայաստանի ֆերմերային Շարժում» (ՖՇ) կազմակերպության հիմնադիր համագումարը տեղի է ունեցել 1996 թ. փետրվարի 9-ին՝ ք. Երևանում: ՖՇ-ի նախաձեռնողներն են եղել գյուղացի-ֆերմերներ՝ հանրապետության տարբեր գյուղերից, գյուղատնտեսության բնագավառի ճանաչված գիտնականներ, այլ մասնագետներ: ՖՇ հիմնադիր համագումարում հաստատվեց կազմակերպության կանոնադրությունը և գործունեության հիմնական ծրագիրը, ինչպես նաև՝ ընտրվեցին ՖՇ ղեկավար մարմնի՝ Ֆերմերային Պալատի և Վերստուգիչ հանձնաժողովի անդամները: ՖՇ կազմակերպությունը Պետական գրանցում է ստացել 1996թ. ապրիլի 22-ին՝ ՀՀ Արդարադատության նախարարության կողմից: 2000թ. դեկտեմբերի 26-ին ՖՇ-ն վերագրանցվել է՝ վերանվանվելով Հայաստանի «Ֆերմերային Շարժում» (ՖՇ) կազմակերպության:

## **ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԾՐԱԳԻՐԸ**

ՖՇ-ն հասարակական (ոչ կառավարական) կազմակերպություն է, որի նպատակն է կամավորության հիմունքներով միավորել գյուղատնտեսության տարբեր ճյուղերում տնտեսավորող սեփականատերերի, գյուղացի-ֆերմերների ու գիտնականների ջանքերը, գիտական միտքն ու միջոցները, հանրապետությունում ստեղծել ֆերմերային-գյուղացիական լայն **Շարժում**, որը կնպաստի միացյալ ուժերով լուծելու արտադրա-ֆինանսական, սոցիալ-տնտեսական, գիտական, նաև բարեգործական բնույթի համընդհանուր հիմնահարցեր, որոնք ուղղված են Հայաստանում ֆերմերային տնտեսությունների ձևավորմանը, գյուղատնտեսության արտադրության աճին, ինչպես նաև ներկայացնել և պաշտպանել իր անդամների իրավունքներն ու շահերը գործող օրենսդրության, միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքների շրջանակներում և իր կանոնադրությամբ:

Ելնելով ՀՀ-ում իշխանությունների կողմից հողի սեփականաշնորհման գործընթացի վատ կազմակերպման ու հետագա անուշադրության հետևանքով գյուղատնտեսությունում ստեղծված ծանր իրավիճակից, գյուղացիներին օգնելու և գյուղատնտեսության վիճակը կարգավորելու նպատակով ՖՇ-ն նախատեսում է հանրապետության տարածքում, որոշ դեպքերում նաև այդ տարածքից դուրս, իրականացնել հետևյալ հիմնական գործունեությունը.

1. նպաստել գյուղերի վերականգնման և գյուղատնտեսության զարգացման աշխատանքների կազմակերպմանը՝ հիմնվելով ՖՇ-ի կողմից մշակված «Պայմանագրային Կոոպերացիա»-յի նախագծի վրա,
2. նպաստել գյուղացիների իրավունքների և շահերի պաշտպանությանը, մշակել և ներկայացնել գյուղատնտեսությանը վերաբերող օրենսդրական լուծում պահանջող հարցերի նախագծեր,
3. նպաստել ՖՇ անդամ-գյուղացիների կողմից աճեցրած բերքի իրացմանն ու անհրաժեշտ նյութա-տեխնիկական միջոցների մատակարարման կազմակերպմանը՝ հիմնվելով ՖՇ-ի կողմից մշակված «Գյուղացիական Տեղեկատվական Բանկ»-ի նախագծի վրա,
4. նպաստել ՀՀ-ում Օրգանական գյուղատնտեսության զարգացմանը,
5. նպաստել նոր, ժամանակակից արտադրությունների, վերամշակող ձեռնարկությունների, սպասարկող և այլ ծառայությունների ստեղծմանը,
6. նպաստել ֆերմերային և հողային բանկերի, ֆինանսական տարբեր ծառայությունների ստեղծմանը,
7. նպաստել ֆերմերներին հետաքրքրող տարբեր սոցիալական ծառայությունների ստեղծմանը, օգնությունների, բարեգործությունների կազմակերպմանը,
8. նպաստել ՀՀ և արտասահմանյան կազմակերպությունների հետ գյուղատնտեսական տարբեր ծրագրերի մշակմանն ու իրականացմանը, համաժողովների, սիմպոզիումների, ցուցահանդեսների անցկացմանը, կադրերի պատրաստմանը, գիտական հարցերի մեկնաբանմանը և դրանց պրակտիկ իրականացմանը,
9. ՖՇ կառույցների վերջնական ձևավորումը ՀՀ տարածքում:

Այս ծրագիրը արագ և բարեհաջող կազմակերպելու և իրականացնելու համար ՖՇ-ին անհրաժեշտ են ՀՀ Նախագահի, իշխանությունների, մեր և արտերկրի տարբեր կազմակերպությունների և անձանց բարոյական և ֆինանսական աջակցությունը:

## **«Ֆերմերային Շարժում» ՀԿ-ի կազմակերպած «Գյուղական աղքատություն և ժողովրդավարություն» կոնֆերանսից**

ՀՀ իշխանությունները վերջին տարիներին հայ ժողովրդին և ամբողջ աշխարհին փորձում են ապացուցել, որ մեր երկիրը ընթանում է կայուն զարգացման հունով (մասնավորապես՝ շարունակում է նվազել գյուղական աղքատությունը, գյուղատնտեսության ոլորտում գոյություն ունի կայուն տնտեսական աճ, պաշտպանված են մարդու իրավունքները, ամրապնդվում է ժողովրդավարությունը, ձևավորվել է քաղաքացիական հասարակություն): Միջազգային կառույցների առջև ստանձնած ՀՀ պարտավորությունների կատարման և ներկայացրած թվերի հիման վրա էլ Համաշխարհային Բանկը, Արժույթի միջազգային հիմնադրամը, և միջազգային այլ կառույցներ Հայաստանին ցուցաբերում են ֆինանսական և նյութական աջակցություն, միաժամանակ մեր երկիրն հնարավորություն է ընձեռվում անդամակցելու (կամ ինտեգրվելու) միջազգային մի շարք կառույցների:

Այն, որ իրականում իշխանությունների կողմից բերված թվային ցուցանիշները հիմնականում խաբկանք են (կամ իմիտացիա) և հեռու են իրականությունից, վկայում են հանրապետության բոլոր գյուղական մարզերում «Ֆերմերային Շարժում» գյուղացիական ՀԿ-ի անդամների և համակիրների կողմից գյուղացիների հետ անցկացրած հարցումների արդյունքները:

Երբ համեմատում են ՀՀ արտաքին պարտքը վերջին տարիներին գյուղերում կատարված ներդրումների հետ, ապա անհասկանալի է դառնում, թե այդ ֆինանսական միջոցների մեծ մասը որտեղ և ինչպես է ծախսվել: ՀՀ արտաքին պարտքը օրեցօր մեծանում է և դա կարծես թե իշխանություններին ամենևին էլ չի մտահոգում, և հայտնի էլ չէ, թե երբ, ով և ինչպես է մարելու այդ պարտքը:

ՀՀ անդամակցությունը (կամ ինտեգրումը) միջազգային կառույցներին երբեմն գյուղացիների համար կարող է լինել ոչ նպաստավոր, քանի որ բացի իրավունքներից, ՀՀ կառավարությունը տվյալ կառույցների հանդեպ ստանձնում է նաև մի շարք պարտավորություններ, ինչպիսին է օրինակ՝ Հայաստանի նման աղքատ երկրում արտադրված գյուղատնտեսական մթերքներից ավելացված արժեքի հարկի կիրառման վերաբերյալ ստանձնած պարտավորությունը 2009թ հունվարի 1-ից: Սակայն ամենազարմանալին այն է, որ Հայաստանի կառավարությունը Առևտրի համաշխարհային կազմակերպության հետ կնքել է հուշագիր՝ առանց գյուղացիների հետ այն նախօրոք քննարկելու և գյուղացիների կարծիքը հաշվի առնելու (չէ՞ որ գյուղացիներն են մուծելու այդ հարկը):

Վերոնշվածի կապակցությամբ, «Ֆերմերային Շարժում» գյուղացիական ՌԿ-ն վերջերս հանդես էր եկել դատապարտող հայտարարությամբ, ըստ որի, մասնավորապես, պահանջում է սառեցնել ՌՌ անդամակցությունը Առևտրի համաշխարհային կազմակերպությանը այնքան ժամանակ, մինչև ապահովվի գյուղացու նվազագույն սոցիալական վիճակը:

Ցավալի է, սակայն փաստ է, որ նախկինում զարգացած և զարգացող գյուղատնտեսական երկրից Հայաստանը վերածվել է գյուղատնտեսության առունով հետամնաց և աղքատ երկրի: Իրականում գյուղերը ծերանում են, երիտասարդներն էլ (հիմնականում բարձրագույն կրթությամբ գյուղատնտեսության մասնագետներ)՝ գյուղից հեռանում: Սակայն ՌՌ-ն ունի գյուղատնտեսության զարգացման և զարգացած ագրարային երկիր դառնալու լայն հնարավորություններ, որի համար անհրաժեշտ է, որ երկրում իրականացվի ագրարային ճիշտ քաղաքականություն, հիմնականում՝ ուղղված գյուղերում աղքատության նվազեցմանը:

Գյուղերում տիրող իրական պատկերը վերլուծելու և վերլուծության արդյունքները կոնֆերանսի մասնակիցներին ներկայացնելու նպատակով «Ֆերմերային Շարժում» ՌԿ-ի որոշ անդամներ և համակիրներ, իրենց անմիջական նախաձեռնությամբ և անձնական միջոցներով (անվճար), հարցումներ են անցկացրել հանրապետության գյուղական բոլոր մարզերում (յուրաքանչյուր մարզից հարցմանը մասնակցել է նվազագույնը 3 գյուղական համայնք): Հարցվող գյուղական համայնքների շարքում ներառվել են ինչպես «հարուստ», այնպես էլ՝ «աղքատ» գյուղեր:

Հարցումներն անցկացվել են Արագածոտնի մարզի Ծաղկաշեն, Ոսկեթաս, Թալին և Ուջան, Արարատի մարզի Սիսավան, Արևշատ և Ուրծածոր, Արմավիրի մարզի Տանձուտ, Արգավանդ և Արագափ, Գեղարքունիքի մարզի Մարտունի, Վերին Գետաշեն և Գեղհովիտ, Լոռու մարզի Գյուլագարակ, Ամրակից և Ուռուտ, Կոտայքի մարզի Հացավան, Բուժական և Ողջաբերդ, Շիրակի մարզի .Մարալիկ, Չիֆհանքով, Քարաբերդ և Չորակապ, Սյունիքի մարզի Իշխանասար, Ույծ և Շաքի, Վայոց Ձորի մարզի Գետափ, Վերնաշեն և Ազարակածոր, Տավուշի մարզի Այգեհովիտ, Լուսածոր և Բաղանիս համայնքներում: Յուրաքանչյուր գյուղական համայնքից հարցմանը մասնակցել է 100 պատահական գյուղացի (անկախ տարիքից, սեռից, սոցիալական վիճակից և այլն): Հարցումներից ստացված որոշ տվյալներ համեմատվել են Ազգային վիճակագրական ծառայության, Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի, Համաշխարհային Բանկի ներկայացրած տեղեկատվության և այլ աղբյուրներից վերցված տվյալների հետ, և արվել են համապատասխան հետազոտություններ, վերլուծություններ:

Գյուղական աղքատության առաջացման հիմնական պատճառը գյուղերում ապրելու և աշխատելու համար նորմալ պայմանների բացակայությունն է:

Գյուղացիներին տրվել են աղքատության նվազեցմանը վերաբերող հարցեր, ընդ որում՝

- «նվազե՞լ է գյուղական աղքատությունը» հարցին գյուղացիների 2,8%-ն է միայն դրական պատասխանել,
- «գյուղում քանի՞ տոկոս են կազմում աղքատները և ծայրահեղ աղքատները» հարցին գյուղացիները համապատասխանաբար պատասխանել են՝ *աղքատները*՝ 70,9%, իսկ *ծայրահեղ աղքատները*՝ 39,3%, սակայն ըստ պետական, պաշտոնական տվյալների՝ *աղքատները* կազմում են 23,4%, իսկ *ծայրահեղ աղքատները* 2,4%,

Գյուղական աղքատությունը ավելի լավ պատկերացնելու համար գյուղացիներին տրվել են նաև լրացուցիչ հարցեր, մասնավորապես՝

- «գնե՞լ կամ կառուցե՞լ եք նոր բնակարան» հարցին գյուղացիների 1,6%-ն է միայն դրական պատասխանել,
- «գնե՞լ եք նոր ավտոմեքենա» հարցին գյուղացիների 3,3%-ն է միայն դրական պատասխանել,
- «կարողացե՞լ եք գնալ ՀՀ-ից դուրս հանգստանալու կամ շրջագայելու» հարցին գյուղացիների 0,3%-ն է միայն դրական պատասխանել,
- «գնե՞լ եք նոր սառնարան, հեռուստացույց կամ լվացքի մեքենա» հարցին գյուղացիների 24,8%-ն է դրական պատասխանել,
- «գնե՞լ եք նոր հագուստ» հարցին գյուղացիների 64,8%-ն է դրական պատասխանել,
- «Ձեր երեխաները կարողանու՞մ են հաճախել դպրոց» հարցին գյուղացիների 88,7%-ն է դրական պատասխանել,
- «պետության կողմից ստացե՞լ եք ֆինանսական որևէ աջակցություն» հարցին գյուղացիների 4,2%-ն է միայն դրական պատասխանել,
- «արտերկրից ստացե՞լ եք ֆինանսական որևէ աջակցություն» հարցին գյուղացիների 37,1%-ն է դրական պատասխանել,
- «գյուղում ավելացե՞լ է ծնելիությունը» հարցին գյուղացիների 19,9%-ն է միայն դրական պատասխանել,
- «գյուղում շատացե՞լ են մահացության դեպքերը» հարցին գյուղացիների 59,6%-ն է դրական պատասխանել:

Գյուղացիներին տրվել են պետության դերին վերաբերող հարցեր, մասնավորապես՝

- «զգու՞մ եք պետության աջակցության կարիքը» հարցին գյուղացիների 92,3%-ը դրական է պատասխանել,
- «զգու՞մ եք գյուղատնտեսության նախարարության գոյության իմաստը» հարցին գյուղացիների 3,8%-ն է միայն դրական պատասխանել,

- «գո՞հ եք երկրում իրականացվող ներկայիս ագրարային քաղաքականությունից» հարցին գյուղացիների 5%-ն է միայն դրական պատասխանել,

Գյուղացիներին տրվել են տնտեսական աճին վերաբերող հարցեր՝

- «Ձեր տնտեսությունում ունե՞ք գյուղատնտեսական արտադրանքի աճ» հարցին գյուղացիների 2,8%-ն է միայն դրական պատասխանել, իսկ ամենահետաքրքիրն այն է, որ առանց գյուղացիներին հարցում անելու և նրանցից տեղեկանալու նախորդ տարիների ստացած բերքի արդյունքների մասին տեղեկատվություն, միանգամից գյուղատնտեսական մթերքների աճի վերաբերյալ ինչ-որ թվեր են «օդից» վերցնում ու ներկայացնում կամ՝ «նկարում»,

Գյուղացիներին տրվել են արտագաղթին վերաբերող հարցեր՝

- «բնակչության քանի՞ տոկոսն է արտագաղթել գյուղից» հարցին գյուղացիները պատասխանել են՝ 28,5%:
- «եթե Դուք հնարավորություն ունենայիք, կարտագաղթեի՞ք երկրից» հարցին գյուղացիների 63,5%-ը դրական է պատասխանել:

Գյուղացիներից ցանկացել են իմանալ կարծիք բանկերի վերաբերյալ՝

- «գո՞հ եք գյուղատնտեսության վարկավորման բանկերի աշխատանքից» հարցին գյուղացիների 15,5%-ն է միայն դրական պատասխանել:

Գյուղացիներին տրվել են հողօգտագործմանը վերաբերող հարցեր՝

- «կցանկանայի՞ք Ձեր հողը վաճառել, վարձակալությանը տալ, մշակել համատեղ» հարցերին դրական պատասխանել են գյուղացիների համապատասխանաբար՝ 33,9, 36,2 և 26%-ը,
- «կցանկանայի՞ք վերադառնալ նախկին կոլխոզ-սովխոզներին» հարցին գյուղացիների 39,1%-ը դրական է պատասխանել,
- «կցանկանայի՞ք գյուղում ներդրված տեսնել «Ֆերմերային Շարժում» ՀԿ-ի «Պայմանագրային կոոպերացիա»-ի ծրագիրը» հարցին գյուղացիները 40,5%-ը դրական է պատասխանել:

Եղել են ապագա կանխատեսումներ, մասնավորապես՝

- «ինչպե՞ս եք պատկերացնում գյուղի ապագան» հարցին գյուղացիները համապատասխանաբար պատասխանել են՝ «աղքատության վերացում և գյուղի զարգացում»՝ 24,5%, «աղքատության խորացում և գյուղի կործանում»՝ 45,1%, «ֆոնդալիզմի ծաղկում»՝ 40,2%,
- «վիճակից դուրս գալու ի՞նչ ելք եք տեսնում» հարցին գյուղացիները պատասխանել են համապատասխանաբար՝ «գյուղին և գյուղատնտեսությանը պետական մոտեցում» 88,3%, «գյուղին և գյուղատնտեսությանը ինքնուրույնություն»՝ 19,8%:

Գյուղացիներին տրվել են նաև գյուղական ժողովրդավարությանը վերաբերող հարցեր՝

- «գիտե՞ք ինչ է ժողովրդավարությունը» հարցին գյուղացիների միայն 43%-ն է դրական է պատասխանել,
- «գյուղում կա՞ ժողովրդավարություն» հարցին գյուղացիների միայն 19,7%-ն է դրական է պատասխանել,
- «հավատու՞մ եք ազատ և արդար ընտրությունների անցկացմանը» հարցին գյուղացիների միայն 9,7%-ն է դրական է պատասխանել,
- «կարողանու՞մ եք հրապարակավ, ազատ (առանց վախենալու) արտահայտել այն, ինչ մտածում եք» հարցին գյուղացիների միայն 33,5%-ն է դրական է պատասխանել,
- «կարողանու՞մ եք Ձեզ հուզող հարցերը հասցնել երկրի իշխանություններին» հարցին գյուղացիների միայն 7,6%-ն է դրական է պատասխանել:

Գյուղացիներին տրվել են նաև հավատին և վստահությանը վերաբերող հարցեր՝

- «հավատու՞մ եք գյուղի զարգացմանը» հարցին գյուղացիների միայն 20%-ն է դրական է պատասխանել,
- «հավատու՞մ եք երկրում օրինականության հաստատմանը» հարցին գյուղացիների միայն 9,8%-ն է դրական է պատասխանել,
- «հավատու՞մ եք կոռուպցիայի վերացմանը» հարցին գյուղացիների միայն 3,9%-ն է դրական է պատասխանել,
- «հավատու՞մ եք երկրի պայծառ ապագային» հարցին գյուղացիների միայն 11%-ն է դրական է պատասխանել,
- «վստահու՞մ եք Ձեր համայնքի ղեկավարությանը» հարցին գյուղացիների միայն 28,3%-ն է դրական պատասխանել,
- «վստահու՞մ եք մարզպետարանին» հարցին գյուղացիների միայն 8,9%-ն է դրական է պատասխանել,
- «վստահու՞մ եք իրավապահ մարմիններին» հարցին գյուղացիների միայն 10,4%-ն է դրական է պատասխանել,
- «վստահու՞մ եք երկրի իշխանություններին» հարցին գյուղացիների միայն 12,2%-ն է դրական է պատասխանել,
- «վստահու՞մ եք ընդդիմությանը» հարցին գյուղացիների 43,8%-ն է դրական է պատասխանել,
- «վստահու՞մ եք միջազգային կառույցներին» հարցին գյուղացիների 26,8%-ն է դրական է պատասխանել,
- «վստահու՞մ եք ՁԼՄ-ներին» հարցին գյուղացիների միայն 17,5%-ն է դրական է պատասխանել:

## Ամփոփում

Կատարված ուսումնասիրությունների արդյունքները ցույց են տալիս, որ չնայած գյուղերում իրականացված և իրականացվող բազմաթիվ գյուղատնտեսական ծրագրերի, գյուղը, գյուղատնտեսությունը և գյուղացիները կրկին շարունակվում են մնալ վատթար վիճակում:

Անցած տարի «Ֆերմերային Շարժում» ՀԿ-ն մտադրվել էր հրավիրել մեծ մասշտաբի կոնֆերանս, մասնակցությամբ՝ ՀՀ Վարչապետի, Մարդու իրավունքների պաշտպանի, ԱԺ պատգամավորների, ազդեցիկ քաղաքական ուժերի ղեկավարների (ինչպես իշխանական, այնպես էլ՝ ընդդիմադիր) կառավարության որոշ անդամների (մասնավորապես ՀՀ գյուղատնտեսության նախարարի), հասարակական և միջազգային կառույցների ղեկավարների, ՀՀ-ում հավատարմագրված դեսպանների, հանրապետության գյուղական մարզերի տարբեր գյուղերից ժամանած գյուղացի-ֆերմերների, գյուղատնտեսության բնագավառի ճանաչված գիտնականների, մասնագետների, և այլոց:

Կոնֆերանսը հանրապետության տարբեր մարզերի տարբեր գյուղերից ժամանած գյուղացի-ֆերմերներին, գյուղատնտեսության բնագավառի գիտնականներին և մասնագետներին, հնարավորություն կտար, իշխանության տարբեր ներկայացուցիչների հետ անմիջական շփումների միջոցով բարձրացնել իրենց հուզող հարցերը՝ մինչև միջև իրականացնելով երկխոսություն և առողջ բանավեճ, որի արդյունքում՝ գյուղացիները հնարավորություն կունենային ստանալու իրենց հուզող որոշ հարցերի պատասխանները, իսկ միջազգային կառույցների ներկայացուցիչները, դեսպանները և այլ կազմակերպություններ՝ հնարավորություն կունենային ճիշտ պատկերացում կազմել և ստանալ ճշգրիտ տեղեկատվություն հայաստանյան գյուղի, գյուղացու և գյուղատնտեսության վերաբերյալ:

Չնայած «Ֆերմերային Շարժում»-ը իր ուժերով իրականացրել էր այդ ծրագիրը կատարումը, սակայն կոնֆերանսի անցկացման հետ կապված առկա էին որոշակի տեխնիկական դժվարություններ, դրանք էին՝ կոնֆերանսի մասնակիցների հրավիատոմսերի և նյութերի բազմացումը, դահլիճի վարձակալությունը, որոշ թարգմանությունները, փոքր ընտրիքի

կազմակերպում, որոնք պահանջում էին որոշակի ֆինանսական միջոցներ: Այդ միջոցները հայթայթելու նպատակով, «Ֆերմերային Շարժում»-ը դիմեց ՀՀ-ում գործող որոշ դեսպանատների և միջազգային կառույցների աջակցությանը, որոնք սկզբում խոստացան, սակայն մինչ օրս, նրանցից ոչ ոք չարձագանքեց կազմակերպության խնդրանքին: Այդպես էլ՝ ֆինանսական միջոցների բացակայության պատճառով, կոնֆերանսը չկայացավ:

Վերջերս, կոնֆերանսի անցկացման հարցով, «Ֆերմերային Շարժում» ՀԿ-ն դիմեց «Ռազմավարական և ազգային հետազոտությունների հայկական կենտրոնի» ղեկավար պրն. Ռիչարդ. Կիրակոսյանին: Նա ծանոթանալով կատարված հետազոտությունների և վերլուծությունների արդյունքներին, սիրով համաձայնեց և առաջարկեց կազմակերպել այս սեմինարի անցկացումը:

Այսօրվա, «Գյուղական աղքատություն և ժողովրդավարություն» թեմայով, սեմինարը, իրենից ներկայացնում է անցած տարվա վերոնշյալ կոնֆերանսին նախատեսված նյութը: Սեմինարին համառոտակիորեն ներկայացվեց գյուղերում տիրող իրական վիճակը:

Սակայն, ի տարբերություն անցած տարվա, այս տարի, գյուղերի և գյուղացիների վիճակը է՛լ ավելի է վատացել՝ տնտեսության առկա վատթարային վիճակին ավելացել է նաև Համաշխարհային տնտեսական մեծ ճգնաժամը: 2009թ-ի 1-ին 5 ամսվա կտրվածքով, ՀՀ-ում՝ տեղի է ունեցել տնտեսության անկում 15,7%-ով, որից գյուղատնտեսությունում՝ 2,9%-ով:

«Ֆերմերային Շարժում» գյուղացիական ՀԿ-ն, մտահոգված է՝ գյուղի, գյուղատնտեսության և գյուղացիների ներկայիս ծանր վիճակով, և հիմք ընդունելով, վերոնշյալ հիմնախնդրի անհրաժեշտությունը, կարևորությունը և հարցի լրջությունը, կազմակերպությունը ցանկանում է հանրապետության գյուղական մարզերի որոշ գյուղական համայնքներում իրականացնել կատարելագործված հետազոտա-վերլուծական մի նոր, մեծ ծրագիր, որում՝ կներգրավվեն ավելի շատ մարդիկ և գյուղեր, հարցաշարը և հետազոտությունների շրջանակը ավելի կկատարելագործվեն, նաև՝ կընդլայնվեն, տվյալները կթարմացվեն և կշատանան, կկատարվի ավելի խորը վերլուծություն, որի ընթացքում կկիրառվեն լրացուցիչ նոր գործոններ, և այլն: Ծրագիրը իրականացնելուց հետո, նախատեսվում է կազմակերպել

մեծ կոնֆերանս, որտեղ էլ՝ լայն հանրությանը կներկայացվեն ծրագրից ստացված արդյունքները:

Ծրագրի բարեհաջող իրականացման գործում «Ֆերմերային Շարժում»-ը ակնկալում է դեսպանների և միջազգային կառույցների ղեկավարների ֆինանսական աջակցությունը:

«Ֆերմերային Շարժում»-ը այն կարծիքին է, որ որ ծրագրի և կոնֆերանսի հաջող անցկացումը մասնավորապես կնպաստի՝ գյուղի (գյուղացիների) բարոյա-հոգեբանական վիճակի առողջացմանը, լքվածության զգացումի հաղթահարմանը, պետության նկատմամբ գյուղացու երբեմնի կորած հավատի ու վստահություն վերականգնմանը, գյուղացի-ֆերմերների և իշխանությունների միջև շփումների հաճախակիության ավելացմանը, երկրում տեղի ունեցող ագրարային քաղաքականության քննարկման գործընթացներին գյուղացիների ներգրավվմանը, գյուղացու ձայնը, ինչպես իշխանություններին, այնպես էլ՝ լայն հասարակությանը, լսելի դարձնելուն, իշխանությունների պատասխանատվության բարձրացմանը՝ գյուղի, գյուղացու և գյուղատնտեսության նկատմամբ, հանրապետության գյուղերում իրականացվող գյուղատնտեսական ծրագրերի նպատակային, արդյունավետ, հրապարակային և թափանցիկ դառնալուն, գյուղերում գյուղացիների իրավունքների ու շահերի պաշտպանության բարձրացմանը, գյուղերում ժողովրդավարության և քաղաքացիական հասարակության ձևավորմանը, երկրում գյուղատնտեսությանն զարգացմանը, ինչպես նաև՝ երկկողմ համագործակցության կապեր ամրապնդմանը «Ֆերմերային Շարժում» ՀԿ-ի և միջազգային կառույցների ու դեսպանատների միջև:



# **MF** **Armenian** **"Movement of Farmers"**

## **Establishment of the organization**

The general meeting of **MAF** (“**Movement of Armenian Farmers**”) was conducted in February 9, 1996 in Yerevan. The initiators of MAF were farmers from different villages of the Republic of Armenia, famous scientists in agriculture and other specialists. The general meeting of MAF approved the by-law of the organization and main program activities, elected MAF supreme body, i.e. Farmers’ Chamber and Inspection Committee. MAF was officially registered in April 22, 1996 by the RA Ministry of Justice. In December 28, 2000 it was re-registered and renamed into Armenian “**Movement of Farmers**” (MF).

## **The goal of the organization and the main program activity**

MF is a public organization (NGO) aiming to unite on volunteer basis private farmers in various agriculture fields, efforts of scientists, their scientific skills and means, to establish broad **Farmers’ Movement** in the country, which will promote solution of production, financial, social, economical, scientific, as well as humanitarian issues. These issues are focused to form farms, develop agricultural industry, as well as introduce and protect the rights and benefits of its members according to functioning regulations, principles of international rights and its by-law.

## **The main program activity of MF**

Based on poor management of land privatization by the RA Government and current hardships in agriculture due to careless attitude, and in order to promote the farmers and regulate the situation in agriculture, MF is planning to perform the following main activities within and outside Armenia:

1. Promote rehabilitation and development of rural areas and agriculture based on MF "Contractual Cooperation" Project.
2. Promote protection of rights and interests of farmers, plan and introduce projects requiring legal solution on agriculture issues.
3. Promote marketing of products grown by MF members and organize supply of necessary financial and technical means on MF Project "Farmer Information Bank".
4. Promote establishment of new production, processing enterprises, suppliers and other services.
5. Promote development of organic farming in RA.
6. Promote establishment of farm and land banks and other financial services.
7. Promote establishment of different social services, assistance, charities for farmers.
8. Cooperate with local and foreign organizations in planning and implementing different agricultural programs, conducting conferences, seminars, workshops, staff qualification improvement, discussions and implementation of research issues.
9. Final formulation of MF structure within the country.